

Ես ուզում եմ անդամագրվել **My Health LA (MHLA)!** Ծրագրում: Ի՞նչ պետք է անեն:

Ի՞նչ է իրենից ներկայացնում **My Health LA** ծրագիրը:

My Health LA ծրագիրը՝ դա ԱՆՎՃԱԸ առողջապահական ծրագիր է Լոս Անջելես վարչաշրջանի ցածր եկամուտ ունեցող բնակչության համար, ովքեր բժշկական ապահովագրություն չունեն: MHLA-ը մի ծրագիր է, որի մասնակիցները կարող են ստանալ ընթացիկ, բարձրորակ բուժօգնություն համայնքի կլինիկաներում՝ առողջապահական ծառայություններ մատուցողների թիմի կողմից:

Ինչպե՞ս պետք է անդամագրվեմ:

MHLA-ում անդամագրվելու համար այցելեք My Health LA-ի որևէ կլինիկա: Ձեզ մոտակա կլինիկան գտնելու համար.

- ◆ Չանգահարեք MHLA-ի անդամների սպասարկման կենտրոն 1-844-744-6452 (MHLA) հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից 17:00:
- ◆ Այցելեք dhs.lacounty.gov/MHLA կայք, որտեղ կգտնեք MHLA կլինիկաների հասցեների քարտեզը և ցանկը:
- ◆ Նախապես զանգահարեք կլինիկա՝ տեսակցություն նշանակելու կամ անդամագրվելու համար:
- ◆ My Health LA-ի համար դիմելը միշտ անվճար է:

Ի՞նչ է ինձ տալու ծրագիրը:

- ◆ Կլինիկայի աշխատակիցը ձեզ մանրամասն հարցեր կտա ձեր բնակության վայրի, ընտանիքի անդամների քանակի և ձեր (ու հնարավոր է ձեր ընտանիքի անդամների) ստացած եկամտի մասին:
- ◆ Այս տեղեկությունների հիման վրա կորոշվի ձեր իրավասությունը MHLA-ի համար:
- ◆ Ձեր տրամադրած տեղեկությունները չեն կիսվելու ուրիշների հետ: Դրանք միայն օգտագործվելու են MHLA ծրագրի նպատակների համար:
- ◆ Այդ գործընթացը կարող է 15 րոպեից մեկ ժամ տևել՝ կախված նրանից, թե ձեր ընտանիքի անդամներից քանի հոգի են դիմում:



Ի՞նչ պետք է ունենամ ինձ հետ:

MHLA -ի համար դիմելու համար դուք պետք է ցույց տաք ձեր անձնական նույնականացման (ID) քարտը, որևէ փաստաթուղթ, այն մասին, որ բնակվում եք Լոս Անջելես վարչաշրջանում և ձեր եկամուտը հաստատող փաստաթուղթ: Օրինակ.

Անձը հաստատող փաստաթուղթ

- Վարորդական իրավունք կամ ID քարտ
- Մշտական բնակության վայրի քարտ
- Օտարերկրյա անձնագիր կամ ID քարտ
- Դպրոցի ID քարտ
- Աշխատանքի ID քարտ
- Լուսանկարով այլ ID քարտ

Լոս Անջելես վարչաշրջանում բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթ

- Կալիֆորնիական վարորդական իրավունք կամ ID քարտ
- Վերջին 60 օրվա ընթացքում կատարած կոմունալ վճարումների կտրոնները
- Վերջին 60 օրվա ընթացքում ստացած որևէ նամակ
- Այլ կարգի վերջերս ստացած փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ դուք բնակվում եք ԼԱ վարչաշրջանում

Տեղեկություններ ձեր եկամուտների մասին

- Ամենավերջին կտրոնի (վերջին 45 օրվա ընթացքում ստացած) պատճենը
- Տեղեկանք գործատուից՝ ձեր աշխատավարձի մասին
- Վերջին տարվա հարկային հաշվետվությունները
- Գործազրկության, վետերանի, սոցապահովման նպաստների և այլ բաների մասին տեղեկանք
- Եկամուտը հաստատող այլ տվյալներ

Չանգահարեք MHLA-ի անդամների սպասարկման կենտրոն 1-844-744-6452 (MHLA) հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից 17:00:

